

ՍՏՈՐՈԳԵԼԻԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ
ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՍՏ ԱԼ-ՖԱՐԱԲԻ

Արուսյակ Անդրեասյան

Քանայի բաներ՝ Աբու Նասր ալ-Ֆարաբի, արիստոտելյան տրամաբանություն, արաբական քերականություն, արաբական տրամաբանություն, rawābīṭ (կապեր), ստորոգելիական հանգույց, բայի կապակցման և ստորոգման գործառույթներ, էական բայեր, դերանուն huwa (նա), համաժամանակային կապորդ

Միջնադարյան մուսուլման գիտնականներն Արիստոտելին անվանում էին «Առաջին ուսուցիչ»՝ ի նշան բարձրագույն հարգանքի անտիկ հույն փիլիսոփայի նկատմամբ:

Բուն Արաբական աշխարհում իր ժամանակակիցների կողմից «Երկրորդ Արիստոտել» է անվանվել 10-րդ դարի մտածող Աբու Նասր ալ-Ֆարաբին (մահ. 339/950): Դրա պատճառներից մեկն այն էր, որ հենց ալ-Ֆարաբին հավաքագրեց և համակարգեց «առաջին ուսուցիչ» աշխատությունների նախորդ թարգմանությունները. թարգմանություններ, որոնք հիմնականում կատարվել էին խիստ բառացի և հետևաբար՝ հաճախ շփոթեցնում էին:

Որպեսզի լիովին ընկալվի Աբու Նասր ալ-Ֆարաբիի ինտելեկտուալ ներդրումը, անհրաժեշտ է հասկանալ 10-րդ դարի Բաղդադի ինտելեկտուալ միջավայրը, որտեղ նա անցկացրել է իր կյանքի մեծ մասը: Ջ. Քրամերը նշում է. «Խաղաղության քաղաքը այդ ժամանակ կենսունակ մշակութային վերածննդի տեսարան էր [հիշեցնում]... Իր հսկայական քանակության գիտնականներով, գրախանութներով, գիտական քննարկումների համար [նախատեսված] հավաքատեղիներով, իր բազմազան

բնակչությամբ, ինտելեկտուալ վերնախավի իմաստնությամբ, իր կառավարիչների էներգիայով և փառքով այս հզոր քաղաքային կենտրոնը մի ճոխություն էր, որը հազիվ թե իրեն հավասարն ունենար ամբողջ միջնադարյան աշխարհում»¹:

Այս շրջանում կատարվում են նաև ակտիվ և լուրջ գիտական վերլուծություններ արիստոտելյան տրամաբանության² և արաբական քերականության շուրջ: 10-րդ դարի Բադդադն աչքի է ընկնում ինչպես արաբական քերականության ոլորտում հսկայական նշանակություն ունեցող ուսումնասիրություններով, այնպես էլ խոշոր առաջընթացով արիստոտելյան տրամաբանության արաբերեն մեկնաբանությունների ոլորտում:

Քերականության և տրամաբանության հարաբերակցությունը բազմակողմանի է և հաճախ ոչ միանշանակ³: Այս համատեքստում է առաջ գալիս ալ-Ֆարաբիի, ըստ էության, «արաբական տրամաբանությունը»⁴: Ալ-Ֆարաբին գիտակցում էր տրամաբանության և լեզվի միջև հարաբերակցության և տրամաբանական ուսումնասիրություններում լեզվաբանական վերլուծության կարևորության հարցերը: Այդ իսկ պատճառով նա այս երկու գիտակարգերի միջև հարաբերակցությունը ներկայացրել է առավել ամբողջական և համակարգված ձևով: Ալ-Ֆարաբին

¹ Kraemer, J.L., *Philosophy in the Renaissance of Islam*. Leiden: E.J. Brill, 1986, p. ix.

² Արիստոտելյան տրամաբանությունն ասելով՝ նկատի են առնվում ոչ միայն Արիստոտելի տրամաբանական աշխատությունները, այլև այս աշխատությունների մեկնաբանություններն ավելի ուշ շրջանի հույն տրամաբանների կողմից, և հատկապես՝ Պորփյորի «Ներածությունը»:

³ Այս շրջանում տրամաբանության և քերականության հարաբերակցության խնդրի շուրջ, տե՛ս Անդրեասյան Ա. ., «Տրամաբանության դերը արաբական քերականական ավանդություն», Արևելագիտության հարցեր, Երևան 2013, հ. 8, էջ 131-142:

⁴ Շարադրանքի պարզության տեսանկյունից նպատակահարմար ենք գտնում այդպես անվանել ալ-Ֆարաբիի տրամաբանության և քերականության հարաբերակցության վերաբերյալ հայացքների ամբողջությունը:

բացահայտ կերպով փորձում էր համաձայնեցնել արիստոտելյան տրամաբանությունն արաբերենի հետ և հակառակը:

Սույն ուսումնասիրության մեջ փորձ է արվում ցույց տալ ալ-Ֆարաբիի տրամաբանական սկզբունքների կիրառումը՝ վերլուծելով արաբերենում ստորոգելիական հանգույցի հիմնախնդրի շուրջ նրա մտեցումը:

Ալ-Ֆարաբին, հետևելով հունական քերականական ավանդույթին, իր «Տրամաբանության մեջ կիրառվող ասույթները» ("Kitāb al-'alfād al-musta'mala fi al-mantiq"⁵) աշխատությունում մասնիկներն արաբերենում բաժանում է 5 խմբի⁶: Նա նշում է, որ ստիպված է եղել օգտագործել հունական մոդելը, քանի որ արաբ քերականագետները համապատասխան դասակարգում չեն կատարել, և դրանց բոլոր տեսակները միավորել են մեկ ընդհանուր՝ *ḥurūf* (մասնիկներ) անվան տակ՝ առանց հետագա դասակարգման⁷:

Rawābiṭ-ը (կապեր) ներկայացնում է այդ 5 դասերից մեկը: Այստեղ *rābiṭah* (կապ, *rawābiṭ*-ի եզ. թ.) եզրույթը ներառում է միայն այն կապերը, որոնք միմյանց են կապում նախադասությունները: *Rawābiṭ*-ի ութ տեսակներից⁸ և ոչ մեկը չի կարող օգտագործվել որպես նախադասության շրջանակներում գործող կապ: Այլ կերպ ասած՝ դրանցից ոչ մեկը չի դիտարկվում որպես կապ, որը ցույց է տալիս նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև հարաբերությունը:

⁵ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, *Kitāb al-'alfād al-musta'mala fi l-mantiq*. Ed. By Muḥsin Maḥdi. Beirut: Dār al-Mašriq, 1968. [= 'Alfād]

⁶ Տե՛ս, Անդրեասյան Ա., «Արաբական քերականությունը և նրա կապը տրամաբանության հետ ըստ ալ-Ֆարաբիի», Արաբագիտական ուսումնասիրություններ, Երևան 2013, հ. 6, էջ 19-21:

⁷ Նույն տեղում, էջ 18:

⁸ Նույն տեղում, էջ 54-56:

Սակայն իր «Մասնիկների գիրք» ("Kitāb al-ḥurūf"⁹) աշխատությունում ալ-Ֆարաբին խոսում է *rābiṭah*-ի մասին այլ համատեքստում. այն է՝ որպես նախադասության սահմաններում գործող կապ, որը մատնանշում է ենթակայի և ստորոգյալի միջև եղած հարաբերությունը: Քերականության մեջ դա անվանվում է ստորոգելիական հանգույց:

Արիստոտելյան տրամաբանությունը պրեդիկատիվ տրամաբանություն է: Անկախ տրված նախադասության քերականական կառուցվածքից՝ այդ նախադասությունը միշտ պետք է համապատասխանի «S-ը P է» կառուցվածքին, որտեղ S-ը սուբյեկտն է [քերականական ենթակա], իսկ P-ն՝ պրեդիկատը [քերականական ստորոգյալ]¹⁰:

Այս տրամաբանությունը ենթադրում է բոլոր նախադասությունների միասնական վերաշարադրում՝ անկախ նրանից, թե նախադասության ենթական և ստորոգյալը ո՞ր ժամանակում են համաձայնեցվում՝ անցյալ, ներկա, թե ապառնի: Այս տրամաբանությունը չի տարբերակում նաև բայի ներգործական և կրավորական սեռերը¹¹: Այսինքն՝ այս տրամաբանության տեսանկյունից տարբերություն չկա «Արամը սիրում է Անահիտին», թե «Անահիտը սիրված է Արամի կողմից»¹²:

Սա ալ-Ֆարաբիի հիմնական տրամաբանական սկզբունքներից մեկն էր: Հավանաբար, այդ պատճառով էր նա պնդում, որ

⁹ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, Kitāb al- ḥurūf. Ed. By Muḥsin Maḥdi. Beirut: Dār al-Mašriq, 1970. [= Hurūf]

¹⁰ Abed B. Shukri, Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi, New York 1991, p. 120.

¹¹ Նույն տեղում:

¹² Հայերենի օրինակը մերն է:

rābiṭah¹³-ն (կապ, կոպուլա) անհրաժեշտ է տրամաբանական և տեսական ուսումնասիրությունների համար¹⁴:

Հայերենում (և հնդեվրոպական լեզուներից մեծամասնության մեջ¹⁵) «Արամը սիրում է» նախադասության վերափոխումը «Արամը սիրված է» տարբերակի տրամաբանական խնդիր առաջ չի բերում¹⁶: Սակայն արաբերենում իրավիճակն այլ է: Թեև արաբերենն անցյալ ժամանակում ունի ստորոգելիական հանգույց¹⁷, բայց ներկա ժամանակում այն արտահայտված չէ¹⁸: Այսպիսով, "Zayd yamshi"-ն («Ձեյդը քայլում է») կարող է վերափոխվել "Zayd mashi"-ի («Ձեյդը քայլում է»): Բայց այս վերջին նախադասությունը չունի բայ. միայն "mashi" (բառ.՝ քայլող) դերբայը: Հետևաբար՝ այս նախադասությունը չի համապատասխանում «S-ը P է» ստանդարտ տրամաբանական կառուցվածքին:

Այսպիսով, ալ-Ֆարաբին հայտնվում է մի կողմից արիստոտելյան խիստ սկզբունքների (օրինակ՝ այն, որ ստորոգելիական հանգույցն անհրաժեշտ լեզվական տարր է), և մյուս կողմից՝ արաբական քերականության (որը ներկա ժամանակի համակարգում թույլ է տալիս ստորոգում առանց ստորոգելիական հանգույցի) հարթությունում: Գտնվելով այս համատեքստում՝ նա արաբերենում առաջարկում է համակարգային փոփոխություններ:

Այսպիսի առաջարկությունները (որոնք ենթադրում էին արաբերենի համակարգային փոփոխություն) ալ-Ֆարաբին և

¹³ Քերականորեն՝ ստորոգելիական հանգույց:

¹⁴ 'Al-Fārābī, Hurūf, 112:3.

¹⁵ St' u, Versteegh, C.H.M. Greek Elements in Arabic Linguistic Thinking. Leiden: E.J. Brill, 1977, p. 73.

¹⁶ Հայերենի օրինակը մերն է:

¹⁷ Խոսքը kāna (լինել) պակասավոր բայի մասին է:

¹⁸ Այս մասին, տե՛ս, Al-Horais N., Arabic verbless sentences: is there a Null VP?, Pragmalinguistica, 14, (2006), pp. 101-116.

մնացած արաբ տրամաբաններին ենթարկեցին սուր քննադատության արաբ քերականագետների կողմից: Վերջիններս հակառակվում էին ցանկացած նման «օտար» փոփոխության՝ համարելով դա իրենց լեզվի մեջ ոչ անհրաժեշտ «ներխուժում»¹⁹:

Ըստ ալ-Ֆարաբիի, եթե նախադասության ստորոգյալը բայ է, ապա այն միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես ստորոգյալ, և՛ որպես կապ [ստորոգելիական հանգույց]²⁰: Հետևաբար՝ նրա տեսանկյունից յուրաքանչյուր բայ միաժամանակ իրականացնում է և՛ կապակցման (կոպուլատիվ), և՛ ստորոգման (պրեդիկատիվ) գործառույթ:

Երբեմն բայերն իրենց այս կապակցման գործառույթն իրականացնում են ստորոգման գործառույթի հետ միաժամանակ, ինչպես «Ձեյդը վազում է» օրինակում: Այլ դեպքերում նրանք պարզապես ցույց են տալիս նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև եղած հարաբերությունը, ինչպես «Ձեյդը մարդ է» օրինակում²¹: Առաջինն այն դեպքն է, երբ ենթական անուն է, իսկ ստորոգյալը՝ բայ²², իսկ երկրորդ դեպքում և՛ ենթական, և՛ ստորոգյալն անուններ են:

¹⁹ Այս շրջանում տրամաբանների և քերականագետների միջև հայտնի բանավեճի մասին, տե՛ս, Versteegh, C.H.M. *Grammar and Logic in the Arabic Grammatical Tradition*. Berlin and New York: Walter de Gruyter. 2000. 300-306.

²⁰ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, *Sharḥ al-Fārābī li- kitāb Aristutālis fi al-'ibārah*. Edited by W. Kutsch and S. Marrow. Beirut: Al-maṭba'ah al-kathulikīyyah, 1960, 33. [= 'Ibārah].

²¹ Abed B. S., *Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi*, p. 126.

²² Բայերը երբեք չեն կարող հանդես գալ որպես ենթակա: Բայի այս առանձնահատկությունը շեշտվում է ինչպես փիլիսոփաների, այնպես էլ արաբ քերականագետների կողմից՝ որպես անվան և բայի միջև ևս մեկ տարբերություն: Տե՛ս, Aristotle. *De Interpretatione*, 16b8; Ibn al-Sarraj, *Al-muwjaz fi al-nahw*, ed. by alShuwaymi/Damirji, Beirut: 1965, p. 4; par. 3.

Բայերի ընդհանուր դասից միայն էկզիստենցիալ՝ էական բայերը²³ (al-kalim al-wajūdiyyah) կարող են գործել այս երկրորդ՝ զուտ կապակցման ֆունկցիայով²⁴ : Որպես այդպիսին՝ նրանք միայն rawābit (կապեր) են: Ուսումնասիրենք ալ-Ֆարաբիի էկզիստենցիալ բայերից yujad-ը (կա)՝ wajūd-ի (գոյություն) և mawjūd-ի(կա . yujad բայի հարակատար դերբայը, և ըստ ալ-Ֆարաբիի՝ ածանցված wajūd-ից) հետ միասին:

Ի լրումն էկզիստենցիալ բայերի՝ ալ-Ֆարաբին նշում է, որ անջատ դերանունները ևս նախադասության մեջ կարող են կիրառվել որպես կապ [ստորոգելիական հանգույց]²⁵: Այսպիսով, անջատ դերանուն huwa-ն (նա) սկսում է ընկալվել նաև որպես կապ, երբ արաբ փիլիսոփաները փնտրում էին պարսկերեն hast և հունարեն estin-ին համարժեք բառ²⁶ (նույնը, ինչ հայերենում օժանդակ բայ «է»-ն է) :

Հունարեն տեքստերի արաբ թարգմանիչները, ինչպես պարզաբանում է ալ-Ֆարաբին²⁷, ստիպված էին «հայտնագործել» նման «կապ», քանի որ դա անհրաժեշտ էր տեսական գիտությունների և [հատկապես] տրամաբանության համար:

Փաստորեն, ալ-Ֆարաբիի տեսանկյունից ստորոգելիական հանգույցի ներմուծումը արաբերեն նախադասության մեջ խիստ անհրաժեշտություն է, որը պարտադրված է տրամաբանության օրենքների կողմից, այն է՝ մտածողության, մտքի օրենքների կողմից: Այդ պատճառով է, որ ալ-Ֆարաբիի համար ցանկացած

²³ Բացի yujad-ից (և նրա ածանցյալներից, ինչպես օրինակ, mawjūd)՝ ալ-Ֆարաբին էկզիստենցիալ բայերի թվին է դասում նաև այն, ինչ արաբական քերականության մեջ անվանվում է kāna(լինել) wa-akhawatuha (kāna-ն և իր քույրերը): St 'u 'Al-Fārābī, Hurūf, 112; par. 83.

²⁴ 'Al-Fārābī, Hurūf, 112; par. 83.

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ 'Al-Fārābī, Hurūf, 112; par. 83.

լեզվում ստորոգելիական հանգույցի առկայությունն ավելի շատ կառուցվածքային ինդիք է, քան այս կամ այն լեզվի առանձնահատկություն: Սա հետևում է քերականության և տրամաբանության՝ ալ-Ֆարաբիի ընկալումից: Նա գտնում էր, որ քերականության կանոնները կիրառելի են միայն մեկ լեզվի ասույթների²⁸ նկատմամբ, իսկ տրամաբանությանը՝ ընդհանուր են բոլոր լեզուների համար²⁹:

Ալ-Ֆարաբին ոչ միայն հավանություն է տալիս արաբերենում ստորոգելիական հանգույցի ներմուծմանը (որը կատարվել էր հունարեն փիլիսոփայությունը արաբերեն թարգմանողների կողմից), այլև մեկ քայլ առաջ է տանում այս լեզվաբանական զարգացումը՝ ընդունելով, որ այն անհրաժեշտ է՝ լցնելու համար այն «ճեղքը», որ տրամաբանությունն, այսպես ասած, բացահայտել էր արաբերենում³⁰: Ի վերջո, կա զուգահեռականություն քերականության և տրամաբանության օրենքների միջև. «Ցանկացած օրենք, որ տալիս է քերականությունն ասույթների համար, ունի [համապատասխան] կրկնորդ, որ տալիս է տրամաբանությունը հասկացությունների համար»³¹: Այն տեսությունը, որ կա համապատասխան զուգահեռականություն լեզվի և մտածողության միջև³², կազմում է ալ-Ֆարաբիի լեզվաբանական փիլիսոփայության գլխավոր նյութը:

²⁸ Արաբերեն 'alfād-ի հայերեն համարժեքը: Տե՛ս, Անդրեասյան Ա., «Արաբական քերականությունը և նրա կապը տրամաբանության հետ ըստ ալ-Ֆարաբիի», էջ 16:

²⁹ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, 'Ihṣā' al-'ulūm, ed. 'Alī Bū Muḥim, Dār wa-maktabah al-Hilāl, 1996, p. 34-35. [= 'Ihṣā']

³⁰ Abed B. S., Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi, p. 127.

³¹ Abū Naṣr Muḥammad ibn Muḥammad al-Fārābī, 'Ihṣā' al-'ulūm, ed. 'Alī Bū Muḥim, Dār wa-maktabah al-Hilāl, 1996, p. 35.

³² Այս զուգահեռականության մասին մանրամասն, տե՛ս, Haddad Fuad. 'Al- Fārābī's Views on Logic and its relation to Grammar. Islamic Quarterly 13, 1969.

Ալ-Ֆարաբին³³ պնդում է, որ կան բոլոր լեզուներին բնորոշ հստակ առանձնահատկություններ: Սա պատահական չէ, քանի որ բոլոր լեզուները միևնույն բանի, այն է՝ համընդհանուր հասկացությունների տիրույթի արտաքին դրսևորումներն են: Եվ քանի որ այն օրենքները, որ կառավարում են մասնավոր լեզուները, պայմանական են³⁴, նրանք կարող են խախտվել և անզամ փոխվել [որպեսզի համապատասխանեն տրամաբանության օրենքներին, որոնք համընդհանուր են բոլոր լեզուների համար]:

Ստորոգելիական հանգույցի ներմուծումն արաբերենում ալ-Ֆարաբիի համար համապատասխան դեպքերից է: Հետաքրքիր է նկատել, որ նա ստորոգելիական հանգույցը դիտարկում է ոչ թե որպես բայ (ինչը հավելյալ կերպով ենթադրում է ժամանակի հղում³⁵), այլ որպես համաժամանակային կապորդ³⁶: Սա ենթադրում է ներկա, ապառնի և անցյալ ժամանակները միավորող եզրույթ: Այլ կերպ ասած՝ մի եզրույթ, որը զուրկ է ժամանակի հղումից և հանդես է գալիս զուտ որպես ստորոգելիական հանգույց:

Ինչպես կարելի է նկատել, *mawajūd* (կա) հարակատար դերբայի ընտրությունը՝ որպես արաբերենում համաժամանակային կապորդ, լիովին գոհացնում է ալ-Ֆարաբիին: Նա անզամ ավելի հեռուն է գնում՝ պնդելով, որ բոլոր լեզուներում գոյություն ունեն նմանատիպ դեր ունեցող բառեր: Այսպես՝ «*Tbārah*»³⁷-ում նա նշում է, որ բոլոր լեզուներում էլ կան էկզիստենցիալ բայեր, որոնք մատնանշում են ներկա, ապառնի և անցյալ ժամանակները: Կան

³³ 'Al-Fārābī, *Hurūf*, 81; par. 36.

³⁴ Լեզվի պայմանական բնույթի մասին, տե՛ս, 'Al-Fārābī, 'Tbārah, 27:

³⁵ Aristotle. *De Interpretatione*, 16b6.

³⁶ Սույն եզրույթը՝ «համաժամանակային կապորդ» ("omnitemporal connector"), առաջարկված է Շ. Աբեդի կողմից՝ Abed B. S., *Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi*.

³⁷ 'Al-Fārābī, 'Tbārah, 46:

նաս անուններ՝ ածանցված բայանուններից [Էկզիստենցիալ բայերի բայանուններից], որոնք ժամանակ չեն մատնանշում (մնացյալ ածանցյալ անունների նման), այլ ծառայում են զուտ որպես կապ այնպիսի պնդումներում, որոնց ստորոզյալներն անուններ են: Այս անունը, ինչպես նշում է նա, արաբերենում *mawajūd* եզրույթով է հանդես գալիս, հունարենում՝ *estin*, պարսկերենում՝ *hast/ast*, և նմանապես բոլոր լեզուներում³⁸: Ըստ էության, ալ-Ֆարաբին գտնում է, որ յուրաքանչյուր լեզվում կան որոշակի եզրույթներ, որ կոնկրետ ժամանակ չեն մատնանշում և միայն կապի դեր են ստանձնում³⁹: Բայց այդ եզրույթը վերացարկված [*mujarradah*] պետք է լինի իր նախնական, բուն իմաստից և օգտագործվի հատուկ ձևով, այն է՝ միայն ցույց տալու համար նախադասության ենթակայի և ստորոզյալի միջև եղած հարաբերությունը: Այսպես՝ իր «*Hurūf*»⁴⁰ աշխատությունում նա նշում է, որ քանի դեռ մենք մտապահում ենք այն նշանակությունը, որ մենք ենք սովել եզրույթին որպես համաժամանակային կապորդ, լիովին ընդունելի է այդ դերի համար օգտագործել ցանկացած եզրույթ՝ լինի դա բայ, անուն, թե դերանուն: Ալ-Ֆարաբին խոսում է եզրույթների «ձեռքբերովի նշանակությունների» մասին՝ մատնանշելով, որ լեզուների պայմանական բնույթի⁴¹ հետևանքով հաճախ է պատահում, որ որոշակի եզրույթներ են ստեղծվում՝ նշանակելու համար իրենց նախնական իմաստից տարբերվող

³⁸ Նույն տեղում:

³⁹ Նույն տեղում:

⁴⁰ 'Al-Fārābī, *Hurūf*, 112-114, par. 83,86.

⁴¹ Միջնադարյան արաբական աշխարհում լեզվի ծագման և արաբերենի դերի մասին տե՛ս Versteegh C. "Linguistic Attitudes and the Origin of Speech in the Arab World". *Understanding Arabic. Essays in Contemporary Arabic Linguistics in Honor of El-Said Badawi*, ed. by Alaa El-gibali, Cairo: The American University in Cairo Press. 1996, pp. 15-31.

իմաստ⁴²: Այսպիսի դեպքերում մենք պետք է անտեսենք նախնական նշանակությունը և այդ եզրույթները դիտարկենք ոչ թե որպես ածանցյալներ, որոնք ունեն այն [եզրույթի] իմաստը, որից ածանցվել են, այլ, ավելի շուտ, որպես եզրույթներ, որոնք վերացարկված են [mujarradah] այդ նախնական իմաստից և ունեն տարբերվող (և անհրաժեշտաբար այդ նախնական իմաստին ոչ մոտ) իմաստ⁴³:

Արաբերենում mawajūd անվան և huwa դերանվան շուրջ ալ-Ֆարաբիի վերջնական միտքն այն է, որ կարելի է օգտագործել այս եզրույթներից ցանկացածը⁴⁴: Այսինքն՝ ստացվում է, որ այս երկու եզրույթները նրա համար հավասարազոր հոմանիշներ են:

Շ. Աբեդը⁴⁵ նաև ցույց է տալիս, որ, շատ հնարավոր է՝ ալ-Ֆարաբին առաջարկեր նաև yujad բայը որպես արաբերենում ստորոգելիական հանգույցի երրորդ տարբերակ՝ շրջանցելով ժամանակի այն գործոնը, որ ենթադրում է այս բայի կառուցվածքը:

Mawajūd-ի հետ կապված՝ նա նշում է, որ վերջինս հունարենում estin-ի և պարսկերենում hast-ի համարժեքն է արաբերենում⁴⁶: Սա գրեթե բառացի մի քանի անգամ կրկնվում է «Hurūf»⁴⁷-ում այն շեշտադրությամբ, որ սույն եզրույթն ունի պայմանական նշանակություն, երբ այն կապակցման ֆունկցիա է իրականացնում նախադասության մեջ: Ալ-Ֆարաբիի կրկնվող նախազգուշացումները, որ մենք չպետք է mawajūd-ի այս նշանակությունն ասոցացնենք wajūd-ի հետ (որից այն ածանցվել է), մատնանշում են նրա իրազեկությունն այն ինդրում, որ այս

⁴² 'Al-Fārābī, Hurūf, 71-72, par. 21.

⁴³ Նախնական իմաստ ասելով՝ մենք նկատի ունենք այն իմաստը, որ սկզբնապես վերագրվել է այդ եզրույթին:

⁴⁴ 'Al-Fārābī, Hurūf, 114, par. 86.

⁴⁵ Abed B. Shukri. Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi, p. 137.

⁴⁶ 'Al-Fārābī, Hurūf, 113-114, par. 84.

⁴⁷ Նույն տեղում, 113-115.

եզրույթի ընտրությունը՝ որպես համաժամանակային կապորդ, ներառում է որոշակի խնդիրներ և կարող է լինել ապակողմնորոշիչ⁴⁸: Այսինքն՝ դրա կիրառման ժամանակ որպես ստորոգելիական հանգույց պետք է վերացարկվել wjd արմատի նշանակությունից (գտնել, լինել)⁴⁹:

Հետևաբար, ըստ ալ-Ֆարաբիի՝ huwa-ն չպետք է դիտարկել որպես դերանուն, և ո՛չ էլ պետք է դիտարկել mawjūd -ի անանցյալ բնույթը կամ yujad բայի մեջ ենթադրվող ժամանակային հղում, երբ վերջիններս կիրառվում են որպես ստորոգելիական հանգույցներ:

Սակայն պետք է նկատել, որ անգամ տրամաբանության տեխնիկական լեզուն արաբերենի փոխադրելիս ալ-Ֆարաբին սովորաբար դուրս է հանում կապը՝ ստորոգելիական հանգույցը, և օգտագործում է ոչ տեխնիկական լեզու⁵⁰: Մա, հավանաբար, նպատակ էր հետապնդում հասկացվել իր ժամանակակիցների լայն շրջանակի կողմից:

«Hurūf»-ում ալ-Ֆարաբին օգտագործում է օրինակներ բացահայտ ստորոգելիական հանգույցով, ինչպես՝ «'al-insān mawjūd hayawān»⁵¹ («մարդը կենդանի է») և այլն: Բայց այս դեպքերում, ինչպես կարելի է ենթադրել, գաղափարը ոչ թե արաբերենի ընթացքը կամ ոճը փոխելն է, այլ, ավելի շուտ, ապացուցել mawjūd-ի կիրառումը որպես համաժամանակային կապորդ՝ նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև:

Այսինքն՝ ալ-Ֆարաբին փորձում է ցույց տալ, որ թեև ստորոգելիական հանգույցը գոյություն ունի բոլոր լեզուների

⁴⁸ Նույն տեղում, 114, par. 86.

⁴⁹ wjd արմատի ամբողջական նշանակությունը, տե՛ս, 'Al-Mu'ajam al-wasīf, p. 949.

⁵⁰ Տե՛ս, Abed B. Shukri. Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi, p. 139-140.

⁵¹ 'Al-Fārābī, Hurūf, 214, par. 230

տրամաբանական կառուցվածքում, այն կարիք չունի արտահայտված լինել յուրաքանչյուր նախադասության մեջ :

Ալ-Ֆարաբին պնդում է⁵², որ իր մտադրությունը միայն Արիստոտելի տրամաբանության օրենքները ճշգրիտ ներկայացնելը չէ, այլև հետաքննելը, թե ինչպես ներկայացնել այս օրենքները «արաբերենին բնորոշ ասույթների միջոցով» ("bi-'alfāḍ mashhūrah 'inda ahl al-lisān al-'arabi'⁵³):

Այսպիսով, ալ-Ֆարաբիի խնդիրը հունարենից արաբերեն պարզ թարգմանությունը չէր: Այդպիսի թարգմանություն կատարվել էր ալ-Ֆարաբիի՝ տրամաբանության ասպարեզ բարձրանալուց շատ տասնամյակներ առաջ թարգմանիչների կողմից: Ալ-Ֆարաբին փոխեց իր առջև դրված տրամաբանական խնդրի ուղղությունը, այն է՝ հունարեն տրամաբանական աշխատությունների բառացի և պասիվ թարգմանությունից դեպի փիլիսոփայական վերլուծությամբ ուղեկցվող կենդանի թարգմանություն: Դրանով նա տրամաբանական հիմնախնդիրների նկատմամբ ցուցաբերեց համակարգված մոտեցում արդեն նոր՝ արաբերենի միջավայրում:

⁵² 'Al-Fārābī, Kitāb al-Qiyās al-saghīr, ed. Mubahat Turker, in: Ankara Üniversitesi: Dil ve Tarih-Cografya Fakültesi Dergisi, 16 (1958): 244-86; մեջբերումն ըստ Abed B. S., Aristotelian Logic and The Arabic Grammar in Alfarabi, p. xviii-xix.

⁵³ Նույն տեղում:

THE PROBLEM OF COPULA IN ARABIC ACCORDING TO AL-FARABI.

Summary

Arusyak Andreamyan

This study is about famous Arab philosopher al-Farabi's views on the problem of the lack of copula in Arabic. In order to make it more intelligible we treated here with different issues, connected with al-Farabi's views on logic and its relation to the Arabic grammar. Al-Farabi suggests that the injection of the copula into the Arabic sentence is a necessity, imposed by the rules of logic and more clearly, by the rules of thought. The presence of a copula is rather a structural matter in any language, than a peculiarity of one language or another.

He discusses the copula as a "timeless connector" rather than a verb, which helps al-Farabi to overcome the difficulties in accommodating the Arabic Language to the Aristotelian logic. In Arabic the noun *mawujūd* and the pronoun *huwa* may be used interchangeably as a copula. But these terms, when used as a copula, should be abstracted from their original meaning.

However, it is very important to take under consideration that al-Farabi's idea is not to change the manner of the Arabic language. He was trying to show that although the copula exist in the logical structure of all languages, it need not be manifested in every sentence in all languages. Al-Farabi himself provides logical examples without the copula. Thus we can see al-Farabi's main purpose. The issue for him was not a matter of mere translation from Greek into Arabic. He changed his focus from a literal and passive translation to an active in order to be understood by the Muslim community at large.